

ՏԱՍՆ ԵՒ ԵՐԵՎԱՆԻ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի է, կես տարեկանը 6 ռուբլի:
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միայն խմբագրատան միջոցով:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և սոն օրերէն):

Պայտարարութիւնը ընդունւում է ամեն լեզուով:

Պայտարարութիւնները համար վճարում են
իրաւապահները բառին 2 կոպեկով:

ԱՌԱՋԻԿԱՅ 1890 ԹԻԱԿԱՆԻՆ

„ՄՇԱԿ“

ԴՐԱՎԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Կը հրատարակել թիֆլիսում, նոյն զիրքով և նոյն պրոպրիետարով Մենը ստանում ենք սեփական ՀԱՌԱՊԵՐՆԵՐ.

«ՄՇԱԿ» տարեկան գինը 10 ռուբլի է, կիս տարեկանը 6 ռուբլի:

Գրվել «ՄՇԱԿ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՍԱՆԻ (Բարձրագույն և Բարձրագույն փողոցների անկիւնում, Թամարիայի տանը):

Կայտարարութիւնը և լրագրողները «ՄՇԱԿ» գրվելու համար պէտք է դիմել հետևեալ հասցեով. ТИФЛИСЪ, Редакция газеты «МШАКЪ», իսկ արտատարանից. Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

ԲՈՎԱՆԳԱՎՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. «Մենք առիցի ենք».
Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Յուստան և Կրեմլ. Արտաքին լուրեր.—ԽՈՒՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԱՌԱՊԵՐՆԵՐ.—ԲՈՐՈՒ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Միայն խորհրդաւ պատմութիւնը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«ՄԵՆՔ ԱՍԻՐԱՅԻ ՆԵՐՔ»

Ամեն անգամ, երբ թէ առօրեայ կեանքի մէջ և թէ նոյն իսկ մամուլի և գրականութեան մէջ, մարդ առաջարկում է հայ ժողովրդին պատուաւոր աշխատանք և այն մարդասիրական գաղափարը, այս կամ այն ճանապարհով միշտ մի և նոյն խնդրով են դիմադրում ամեն մի նորութեան, կըրկնելով հետեւեալ փրագները. «մեր ժողովուրդը ասիացի ժողովուրդ է, մենք եւրոպացի չենք»:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄՈՂԱՍԷ ՍՈՐԵՆԱՅՈՒ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

(Աշխարհաբար թարգմանեց և լուստարանեց խորհրդաւ պատմութիւնը Ստեփանէն *)

Տղիտութեան միշտ զուգընթաց է անտարբերութիւնը, որի հետեւանքն է ֆէլիցիական անշարժութիւնը: Գիտութեան լոյսն է միայն միջոց առաջին մարդկանց նկատելու շրջակայ երևոյթները, հետաքրքրելու նրանցով, ուսումնասիրելու նրանցով: Այն սէրը կամ ատելութիւնը, որ հիմնված է որ և է առարկայի, երևոյթի, մարդու ուսումնասիրութեան վրա, նրա ամբողջ էութեան կատարեալ ծանօթութեան վրա, այդ սէրը կամ ատելութիւնն անկեղծ է, գիտակցական է, հետեւաբար և անմահ. իսկ այն սէրը, որը հիմնված է կոյր հաւատական սխտեմի վրա, կամ ներշնչված է անանգական սկզբունքով—կեղծ է, անհիմն է և առաջին թոյլ հողմից խորտակվող: Որքան էլ որ բարձր և վսեմ լինի սիրոյ զաղափարը, այնու ամենայնիւ, կրկնում ենք, որ ներշնչված սէրը կուենայ միշտ անբարոյականացնող ներգործութիւն, որովհետեւ նա չը անդիւլով միտքը և սիրտը մտցնում է օրդանիդի մէջ կեղծիքի—տարր, որը որքան և շահաւէտ լինի մարդու հետ, համար, այնքան աւելի համախառնաբար վնասակար հասարակական կեանքի մէջ: Ինչպէս կարող է սուսուցիւր պահանջել իր աշակերտից,

*) Տպւած է Պետերբուրգում, Սիբիրսոյումի աղ-պարանում, ներկայ 1889 թ.ին:

ինչ որ եւրոպացուն օգտաւէտ է, մեղ համար վնասակար կարող է լինել:

Այդ և մտաւորապէս զրա նման փրագներ աւելն քայլափոխում կարելի է լսել. լսելով այդպիսի սխալ դատողութիւններ, մարդ շտաբում է, մտածելով արդեօք այդպէս ասողները իսկապէս համոզված են, որ այդ միտքը ճշմարիտ է, թէ միայն դա մի դիմակ է իրանց բարոյական աղքատութիւնը և մտաւոր անշարժութիւնը ծածկելու համար:

Նիւէ այդ սխալ, կրիտիկային չը դիմացող միտքը ճշմարիտ որ անկեղծ և անխաղախ համոզմունք լինել մի յայտնի տեսակի մարդկանց համար.—այդ այնքան էլ պատահական չէր լինի և այդ դէպքում դուք էլ կարելի էր լինէր ասել, հանգիստ և երկար բացատրութիւններով հերքել այդպիսի կարծիքները. բայց, տարաբաղադրաբար դժուար է այդպէս ասող մարդկանց հետ հանգիստ և մանրամասն վիճաբանութեան մէջ մտնել, որովհետեւ դրանք, մեծ մասամբ, կեղծում են, մտքի խաղախութիւնն են զօրծ դնում, և

որ նա անկեղծօրէն սիրէ այն հերոսներին, այն նախնիներին, այն հեղինակներին, որոնց եւ ներկայացնում եմ իբրեւ կուռքեր, առանց միջոց տալու աշակերտին ծանօթանալու անձամբ նրանց ներքին կեանքի, նրանց ոգու հետ, առանց առաջնորդելու աշակերտին, որ նա շօշափէ այն անձնավորութիւնները, դէպի որոնց ուսուցիչը նրանից սէր է պահանջում: Նիւէ աշակերտը կրկնում է միևնույն անգամ քիչ էլ ոգևորված այն, ինչ ասել է նրան ուսուցիչը, այդ չէ նշանակում, որ նա ըմբռնել է իր կրկնածը. նա պատասխանում է զայն և ուրիշ ոչինչ, նա կատարում է որոշ ձեւակերպութիւն որոշ նպատակով: Հարկաւոր է հետեւել ուսուցիչին, որ աշակերտի հասարակական կեանքի հէցն առաջին քայլում աներկութեան նրա մտքից և սրտից այն պատմական իրէական կանխաձեռնութիւններով պատկերները, որոնց մասին եղած գովասանքները նա մի ժամանակ ճարտար կերպով կրկնում էր դաստանն մէջ: Նիւէ այս ճիշդ է մանկավարժութեան մէջ, ուրեմն հազար անգամ աւելի ճիշդ է ժողովրդի կրթութեան գործում, այսպէս ասել ժողովրդավարութեան մէջ: Գոնէ անբիւծ, գեւ կեանքի պայմանները չնորհող չապականված մանուկի ոգին կարող է յափշտակվել մի որ և է անձնավորութիւնով, կարող է այդ յափշտակութիւնը այս կամ այն կերպարանքն ստանալ և ամբարնալ նրա մէջ: հաւատ դառնալ, նա եթէ չը հասկանայ էլ զի տակցաբար, կը լինի մի տեսակ ֆանատիկոս բաւրի զաղափարին, բայց միթէ այդ կարող է պատահել չափահաս մարդու հետ, որն արդէն կեանքի մէջ է և շատ լաւ հաղահանում է թէ «բոլոր կրկն» ծառերի վրա չէ բուսնում:

Հէնց այդ պատճառով միշտ ծիծաղելի է լսել

կրկնելով այն փրագը, թէ «մենք եւրոպացի չենք. ինչ որ եւրոպացուն օգտաւէտ է, մեղ համար վնասակար կարող է լինել», միմիայն իրանց բարոյական աշակերտութիւնը և մտաւոր աղքատութիւնը են ուղում ծածկել:

Դիցուք, թէ հայոց դպրոցի բռնաւոր տեսլին և վարժապետին, որոնք ալ ու ձախ աշակերտներին ծեծում են, ասում էք, թէ չէ կարելի երեխաներին ծեծել, դա վատ բան է: Եւ հա՛ն այդ տեսլից կամ վարժապետը, իրանց վայրենի վարմունքը ծածկելու համար, ուրիշ ոչինչ չեն գտնում ասելու, բայց եթէ կրկնելու այն փրագը, թէ «մեր երեխաները եւրոպացի երեխաներ չեն, արեւն առիցիներ են, առանց ծեծի սրանց հետ ոչինչ չէ կարելի անել»:

Փորձեցէք նկատել օտայած շաղկիներ հաղնոց մեր աղաներին և եւրոպական մօղայից յետ չը մնացող հայ-բուրժուաներին, թէ անկարելի է այդքան անխելձ կերպով հալածել փոքրատեղիներ և զօրծաւորներին, այդքան անխելձ կերպով ծեծել ծառաներին, և իսկոյն դրանք ձեռք կը պատասխանեն, որ «մենք եւրոպացի չենք. մինչև որ մեր գեւադաներին և պրկիկաշէկներին մի լաւ չը մղես, նրանք մարդ չեն դառնալ և զլիւիղ կը նստեն»:

Ամեն քայլափոխում տեսնելով խաբէութիւններ, հարստահարութիւններ, տեսնելով թէ ինչպէս դուրը ճնշում է թողլերին, թէ ինչպէս մարդը իրան դեր է դարձնում կնոջը, թէ ինչպէս ծնողները ապրանքի պէս ի ցոյց են դուրս բերում իրանց աղջկաներին և սրա նրա վիշտ-կայծեր, տեսնելով թէ ինչպէս ամեն անկրկններին հարայ-հուրոց են բարձրացնում, երբ մէկը առաջարկում է մի նորութիւն մտցնել կամ ընտանիքի, գամ դպրոցի, գամ որ և է գաղափարայութեան մէջ,—տեսնելով, կրկնում ենք, այդ բոլորը և բոլորեւթով այդ անկրկն, վայրենի և վնասաբեր երեւոյթներին դէմ, մարդ միշտ և միշտ մի և նոյն պատասխանն է լսում. «մենք ասիացի ենք, մենք եւրոպացի չենք. ինչ որ եւրոպացու համար օգտաւէտ է,

մեղ համար վնասակար կարող է լինել»:

Լսելով այդպիսի անմիտ դատողութիւններ, որոնցով դիմադրված են մեր մտաւորապէս խղճաւոր գրողները, և հրապարակաստիները, մեր տղէտ մանկավարժները, ընտանիքների բռնաւոր հայրերը և ժողովրդի զլխին հակալ. կոտորած անձինքը, մարդ ստիպված է հարցնել, թէ միթէ յիշաւի հայի մարմնի մէջ մի տեղ թաղիք է դրած, միթէ հայի երականեւրոպական տեղից ցել է հոսում, և միթէ ասիացի մարդու նեարկերը թուկերից են բաղկացած, կամ նա ուրիշ կերպ է անդիւլում և ապրում, որ ամեն մի նորութիւն, ամեն մի համակրելի, մարդասէր և առաջադիմ միտք և դաղափար, որ շատ լաւ և շատ օգտաւէտ է եւրոպացու համար, կորստաբեր և վնասակար կարող է լինել հայի, կամ ասիացու համար....

Այդպէս մտածելով ուրեմն պէտք է այն եզրակացութեան գալ, որ հային և ասիացուն սեփական յատկութիւններ են խաբէութիւնը, բռնութիւնը, ընտանիքի մէջ տիրող հրէշաւոր հասկացողութիւնները, հնամուտութիւնը, ամեն մի նոր մտքից փախելը, հնամուտութիւնը և աղիտութիւնը. իսկ ամեն մի նորութիւն, որ կարող է ոչնչացնել այդ բոլորը և դրա փոխարեն պատուաւոր մեր կեանքին «Եւրոպային յատկ» դաղափարներ և մտքեր,—վնասակար է և մեր ժողովրդի համար անպէտք....

Բայց դա արեւուրդ է, կասեն մեզ: Հէնց այդ արեւուրդն է մի յայտնի տեսակի մարդկանց դատողութիւնը և աշխարհայեցողութիւնը,—կը պատասխանենք մենք:

Ս. Մ.

ՆՍՈՒՄԻՆ ԼՈՒՍԻՄ

ԳՐՈՒՄԻՑ տտացանք հետեւեալ հեռագիրը. «Ներկ, զեկտեմբերի 10-ին, պատարագելց յետոյ, կատարվեց հանդիսաւոր բացումն այն հայոց դպրոցի, որը կառուցված է Կոնստանտին և Յովհաննէս Ալեկսանեան եղբայրների ծախսով, իրանց ծնող-

անասունի նման սահմանափակված չէ նեղ տեսանկի ներկայով, այլ ճանաչում է և հետաւոր անցեալը, որի հետ կապված է ներկան շանաչելով ներկան, կարելի է գուշակել ապագան: Միայն անասունը—շարունակում է հայր Ստեփանէն—որի ճանաչողութիւնը սահմանափակված է միայն ներկայով, անդալաբար թափառում է իբրեւ ընթացիկ, տղէտ, անօրական և միշտ ստորակ արարած: Ուստի այն աղբը, որը չը գիտէ իր պատմութիւնը, ստիպված է բաւականաչափ անասունների պէս միայն ներկայով և չէ ճանաչում իրան: Գիտնական վարդապետի այս խօսքերը թող իրանց քիչ լայնին այն պոռոտալոս աղային ֆիլիսոփաները, որոնք աղբի առաջադիմութեան դրաւական են համարում: Նրան փառակալով զրքեր տալը՝ նրան անհասկանալի լեզուով: Դրանց նպատակը չէ ժողովրդին հասկանալի անել այդ զրքերի բովանդակութիւնը, ոչ. այլ դրանք այդպիսով կատարում են միայն որոշ ծէս, անմիտ դիմաստիկա, նամադ ինչ օգուտ հային, եթէ նրա պահանջում օսելի զօծած զրքեր կան դարած, բայց որոնք անհատականալ են նրան: Այդ մասին մենք խօսել ենք յարմար առիթին և դեռ կը խօսենք ուրիշ անգամ, իսկ այժմ անցնելով յօդուածին իսկական նիւթին, պէտք է նոյն հայր Ստեփանէնի հետ միասին կրկնենք, թէ «Ամեն մտածող հայ կը միտի թարգմտել տեսնելով աշխարհաբար լեզուով հայկական պատմահօր, Մովսէս խորենացու պատմութիւնը, հայերի երկրորդ աւետարան համարված զրքեր, որ վաղուց արդէն պիտի կատարված լինէր»: Այն, այժմ հայր ունի իր սեղանի վրա այն անմահ զրքեր, որ մէջ պատկերացրած է իր ամբողջ անցեալը, անաչառ, ճշմարտալոս պատմագիրը՝ զրչով, այն գիրքը, որով կարող է

Типографія Канцеляріи Главпочт. Гражд. час. на Кавк., Лорисъ-Меликовск. ул. д. кав.